



**«ԵՐԵՎԱՆԻ ՄԻԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»**



ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

Հայաստան, 0025, Երևան, Կորյունի փ. 2 , հեռ. 060621238, 2-38 , ss@ysmu.am

**«ԵՐԵՎԱՆԻ ՄԻԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ
23-Ի ԹԻՎ 7 ՀԵՌԱԿԱ ԵՂԱՆԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՆԻՍՏՈՒՄ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1407-Ն որոշմամբ հաստատված «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) կանոնադրության 55-րդ կետը

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանից դուրս գտնվող օտարերկրացի ուսանողների ամփոփիչ ատեստավորման քննություններն անցկացնել հետևյալ կանոններով.

ա) ՀՀ-ում գտնվող օտարերկրյա ուսանողների ամփոփիչ ատեստավորման քննությունը կազմակերպել գիտական խորհրդի կողմից հաստատված «2019-2020 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման կանոնակարգով» սահմանված կարգով, ԵՊԲՀ համապատասխան տարածքներում, այդ թվում հանրակացարանում, հաշվի առնելով, որ ԵՊԲՀ ուսանողական հանրակացարանը հանդիսանում է միջազգային ուսանողների մեծամասնության բնակատեղին՝ պահպանելով ՀՀ պարետի թիվ 63 որոշման պահանջները (20-05-07-01).



բ) ՀՀ տարածքից դուրս գտնվող ԵՊԲՀ-ի օտարերկրյա ուսանողների 2019-2020 ուստարվա ամփոփիչ ատեստավորումը կազմակերպել երկրորդ փուլով՝ միջազգային տեղաշարժի հնարավորություն առաջանալու դեպքում, ՀՀ վերադառնալուց հետո՝ 2020թ. օգոստոսի 25-ից սեպտեմբերի 25-ը ընկած ժամանակահատվածում սահմանված հավելյալ քննաշրջանի ընթացքում (20-05-07-02).

2. Հաստատել «Օտարերկրացիների նախապատրաստական ուսուցման 2019-2020 ուսումնական տարվա ավարտական-փոխադրական ատեստավորման ժամանակավոր կանոնները» /կցվում է/ (20-05-07-03).

3. Լրացում կատարել ԵՊԲՀ Գիտական խորհրդի 07.05.2020 թվականի թիվ 20-05-06-01 որոշմամբ հաստատված «2019-2020 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման կանոնակարգում» և ավելացնել նոր 50-րդ կետ, հետևյալ խմբագրությամբ՝

«50. Առցանց ատեստավորման ժամանակ սույն կանոնակարգով չնախատեսված և արտառոց հարցեր առաջանալու դեպքերում Համալսարանի Մանդատային հանձնաժողովը լիազորվում է հրավիրելու արտահերթ նիստ(եր) 1 ժամվա ընթացքում և կայացնելու իրավիճակից բխող և սույն կանոնակարգով սահմանված օբյեկտիվություն ապահովող որոշումներ» (20-05-07-04):

4. Որոշումների կատարման հսկողությունը հանձնարարել ռեկտոր, պրոֆեսոր Ա.Ա.Մուրադյանին:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ա.Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ
ԳԻՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴ
Տ.Գ.ԱՎԱԳՅԱՆ

